Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 27 -ի N 332 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՏՆԱ-ԴՐՈՇՄԱՅԻՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են կասկածյալներից, մեղադրյալներից, դատապարտյալներից (այդ թվում օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ համարվող) (այսուհետ՝ անձ), չճանաչված դիակներից վերցված մատնադրոշմները և դեպքի վայրից վերցված ձեռքի հետքերը մատնադրոշմային քարտադարան մուտքագրելու, հաշվառելու, մատնադրոշմային տեղեկություններ տրամադրելու, պահպանելու, հաշվառումից հանելու հետ կապված հարաբերությունները:

2. Մատնադրոշմային քարտադարանը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կողմից վարվող տվյալների պահոց է, որտեղ հավաքվում, ծածկագրվում, համակարգվում և պահպանվում են մատնադրոշմային տեղեկությունները:

3. Մատնադրոշմային քարտադարանի վարման ընթացքում ոստիկանությունը ղեկավարվում է համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային իրավունքի նորմերով և սկզբունքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Ոստիկանության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով, դրանցից բխող իրավական ակտերով և սույն կարգով:

4. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) մատնադրոշմային տեղեկություն՝ մարդու ձեռքի մաշկային գծանախշերի և հանցագործության դեպքի վայրից վերցված ձեռքի հետքերի, ինչպես նաև անձի վերաբերյալ N 1 ձևում սահմանված տեղեկություն.

2) մատնադրոշմային քարտադարան՝ ոստիկանության կողմից վարվող նյութական կրիչների վրա ամրագրված մատնադրոշմային տեղեկությունների ամբողջություն.

3) մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգ՝ ոստիկանությունում վարվող տվյալների էլեկտրոնային պահոց, որտեղ պահպանվում են մատնադրոշմային տեղեկությունների թվայնացված տարբերակները.

4) մատնադրոշմային քարտ՝ անձի մատնադրոշմներ և անձնական տվյալներ պարունակող ձևաթուղթ.

5) ձեռքի հետքերի գրանցման քարտ՝ հանցագործության դեպքի վայրից վերցված՝ անձանց հետ չնույնականացված ձեռքի հետքերի հաշվառման համար նախատեսված քարտ.

6) նյութական կրիչներ՝ մատնադրոշմային և ձեռքի հետքերի գրանցման քարտեր.

7) թվայնացված գրանցումներ՝ նյութական կրիչների վրա պահվող մատնադրոշմային տեղեկություններ, որոնք պահվում են մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգում.

8) մատնադրոշմային հաշվառում՝ մատնադրոշմային քարտադարանում իրականացվող մատնադրոշմային տեղեկությունների ստացման, դասակարգման, պահպանման և տրամադրման հետ կապված գործողությունների ամբողջություն:

II. ՄԱՏՆԱԴՐՈՇՄԱՅԻՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆԻ ՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Ոստիկանությունն իրականացնում է մատնադրոշմային տեղեկությունների տեղային և կենտրոնացված հաշվառումներ: Տեղային հաշվառումները վարվում են ոստիկանության մարզային վարչությունների փորձաքրեագիտական բաժանմունքների կամ խմբերի կողմից, իսկ կենտրոնացված հաշվառումը՝ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության կողմից:

6. Մատնադրոշմային քարտադարանի տեղեկություններն օգտագործվում են միայն հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման և բացահայտման, ինչպես նաև անձանց նույնականացնելու կամ չճանաչված դիակների ինքնությունը պարզելու նպատակով:

7. Մատնադրոշմային քարտադարանը համալրվում է՝

1) դեպքի վայրից վերցված և դատամատնադրոշմային փորձաքննությունների արդյունքում անձանց հետ չնույնականացված ձեռքի հետքերով (դրանց թվայնացված տարբերակները՝ մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգում).

2) հանցագործության կատարման համար դատապարտված անձանց մատնադրոշմներով (դրանց թվայնացված տարբերակները՝ մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգում).

3) Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց մատնադրոշմներով (դրանց թվայնացված տարբերակները՝ մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգում).

4) ԱՊՀ անդամ պետություններից ներկայացված՝ հանցագործության կատարման համար դատապարտված և Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանց մատնադրոշմներով (դրանց թվայնացված տարբերակները՝ մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգում).

5) Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի կողմից ներկայացված՝ հանցագործության կատարման համար դատապարտված և Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանց մատնադրոշմներով (դրանց թվայնացված տարբերակները՝ մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգում):

III. ՄԱՏՆԱԴՐՈՇՄԱՅԻՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆՈՒՄ ՁԵՌՔԻ ՀԵՏՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Դեպքի վայրից վերցված ձեռքի հետքերի վերաբերյալ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում նշանակված դատամատնադրոշմային փորձաքննության ընթացքում անձի հետ չնույնականացված ձեռքի հետքերի լուսանկարները փորձաքննություն կատարող փորձագետի կողմից փակցվում են սույն կարգի N 2 ձևում սահմանված ձեռքի հետքերի գրանցման քարտի վրա և այն լրացնելուց հետո հաշվառվում ու պահվում մատնադրոշմային քարտադարանում: Գրանցման քարտի վրա փակցված ձեռքի հետքերի լուսանկարը փորձագետի կողմից սքանների միջոցով մուտքագրվում է մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգ, այնուհետև կոդավորվում և թվայնացված տեսքով ստուգվում այնտեղ հաշվառված մյուս հետքերի և անձանց մատնադրոշմների հետ: Ստուգման արդյունքները ձևակերպվում են փորձագետի եզրակացության մեջ: Ձեռքի հետքերը փաթեթավորված և կնքված վիճակում, փորձագետի եզրակացության հետ միասին, ուղեկցական գրությամբ վերադարձվում են վարույթն իրականացնող մարմնին:

9. Դեպքի վայրից վերցված ձեռքի հետքերի վերաբերյալ ոստիկանության մարզային փորձաքրեագիտական ստորաբաժանումներում նշանակված դատամատնադրոշմային փորձաքննության ավարտից հետո անձի հետ չնույնականացված ձեռքի հետքերի լուսանկարը փորձաքննությունը կատարող փորձագետի կողմից փակցվում է ձեռքի հետքերի գրանցման քարտի վրա (քարտի մեկ օրինակն ուղարկվում է ոստիկանության փորձաքրեագիտական

վարչություն, երկրորդ օրինակը պահվում է մարզային քարտադարանում) և այն լրացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղեկցական գրությամբ ներկայացվում է մատնադրոշմային քարտադարան՝ հաշվառման և ստուգման համար, իսկ ձեռքի հետքերը փաթեթավորված և կնքված վիճակում մարզային փորձաքրեագիտական ստորաբաժանման փորձագետի կողմից եզրակացության հետ միասին ուղեկցական գրությամբ վերադարձվում են վարույթն իրականացնող մարմնին: Մատնադրոշմային քարտադարան ներկայացված գրանցման քարտի վրա փակցված ձեռքի հետքերի լուսանկարները սքանների միջոցով մուտքագրվում են մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգ, այնուհետև կոդավորվում և թվայնացված տեսքով ստուգվում այնտեղ հաշվառված մյուս հետքերի և անձանց մատնադրոշմների հետ: Ստուգման արդյունքների մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է վարույթն իրականացնող մարմնին:

10. Դեպքի վայրից վերցված ձեռքի հետքերի վերաբերյալ այլ փորձաքրեագիտական հիմնարկում դատամատնադրոշմային փորձաքննություն նշանակելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը եզրակացությունն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացության պատճենի հետ միասին ձեռքի հետքերն ուղեկցական գրությամբ ներկայացնում է մատնադրոշմային քարտադարան՝ չնույնականացված ձեռքի հետքերը հաշվառելու և քարտադարանով ստուգելու համար: Տեղում ձեռքի հետքերը լուսանկարահանվում են և երևակվում լուսանկարչական թղթի վրա, և դրա լուսանկարը փակցվում է ձեռքի հետքերի գրանցման քարտին: Վերջինիս վրա փակցված՝ լուսանկարի վրա պատկերված ձեռքի հետքերը փորձագետի կողմից սքանների միջոցով մուտքագրվում են մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգ, այնուհետև ծածկագրվում և թվայնացված տեսքով ստուգվում են այնտեղ հաշվառված մյուս հետքերի և անձանց մատնադրոշմների հետ: Ստուգման արդյունքների մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է վարույթն իրականացնող մարմնին:

IV. ՄԱՏՆԱԴՐՈՇՄԱՅԻՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆՈՒՄ ՄԱՏՆԱԴՐՈՇՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Քրեակատարողական հիմնարկները Հայաստանի Հանրապետության տարածքում կալանավորված, ազատազրկման դատապարտված Հայաստանի Հանրապետության քաղաքացու, քաղաքացիություն չունեցող անձի՝ սույն կարգի N 1 ձևում սահմանված մատնադրոշմային քարտը երկու օրինակից, իսկ օտարերկրյա քաղաքացու դեպքում՝ երեք օրինակից ներկայացնում են մատնադրոշմային քարտադարան, որտեղ մատնադրոշմային քարտի վրա արտածվում են մատնադրոշմային բանաձևերը, որից հետո՝

1) դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մատնադրոշմային քարտի մեկ օրինակն ուղարկվում է Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության գլխավոր ինֆորմացիոն կենտրոն՝ միջպետական ինֆորմացիոն բանկում հաշվառելու համար.

2) մատնադրոշմային քարտի մեկ օրինակը հաշվառվում և պահվում է մատնա-դրոշմային քարտադարանում, որի թվայնացված տարբերակը հաշվառվում, ստուգվում և պահվում է մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգում.

3) օտարերկրյա քաղաքացու դեպքում մատնադրոշմային քարտի մեկ օրինակն ուղարկվում է Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրո՝ օտարերկրյա քաղաքացու ծագման պետություն տեղեկացնելու համար:

12. Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի մատնադրոշմային քարտը մատնադրոշմային քարտադարան ներկա-յացվում է ուղեկցական գրությամբ, որտեղ նշվում են տեղեկություններ մատնա-դրոշմային քարտը հաշվառման վերցնելու հիմքերի և անձի կենսագրական տվյալների վերաբերյալ:

13. Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից անձի մատնադրոշմային քարտն ուղեկցական գրությամբ (դրանց թվայնացված օրինակները էլեկտրոնային տարբերակով) ներկայացվում է մատնադրոշմային քարտադարան, որտեղ սքանների միջոցով մուտքագրվում է մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգ, այնուհետև ծածկագրվում և ստուգվում է այնտեղ հաշվառված դեպքի վայրերից վերցված ձեռքի հետքերի և անձանց մատնադրոշմների հետ:

14. ԱՊՀ անդամ պետություններից անձի մատնադրոշմային քարտն ուղեկցական գրությամբ (դրանց թվայնացված օրինակներն էլեկտրոնային տարբերակով) ներկայացվում է մատնադրոշմային քարտադարան, որտեղ սքանների միջոցով մուտքագրվում է մատնադրոշմային ավտոմատացված նույնականացման համակարգ, այնուհետև ծածկագրվում և ստուգվում է այնտեղ հաշվառված դեպքի վայրերից վերցված ձեռքի հետքերի և անձանց մատնադրոշմների հետ:

V. ՄԱՏՆԱԴՐՈՇՄԱՅԻՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆԻՑ ՄԱՏՆԱԴՐՈՇՄԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Մատնադրոշմային քարտադարանի տեղեկություններից իրենց գործառույթների իրականացման շրջանակներում օգտվում են դատարանները, դատախազությունը, հետաքննության և նախաքննության մարմինները:

16. Մատնադրոշմային քարտադարանից տեղեկություններ ստանալու համար հարցումները և դրանց պատասխանները ձևակերպվում են գրավոր, իսկ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության առկայության դեպքում նաև էլեկտրոնային տարբերակով: Հարցումների պատասխանը տրվում է հարցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության կողմից՝ գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով:

17. Սույն կարգի 15-րդ կետում նշված մարմինների գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով հարցման դեպքում նրանց տրամադրվում են ինչպես մատնադրոշմային քարտադարանում հաշվառված անձանց մատնադրոշմների, այնպես էլ դեպքի վայրերից վերցված մատնադրոշմային քարտադարանում գրանցման քարտերում հաշվառված ձեռքի հետքերի լուսանկարների պատճենները (անհրաժեշտության դեպքում նաև թվայնացված տարբերակը):

VI. ՁԵՌՔԻ ՀԵՏՔԵՐԸ ԵՎ ՄԱՏՆԱԴՐՈՇՄՆԵՐԸ ՄԱՏՆԱԴՐՈՇՄԱՅԻՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆՈՒՄ ՊԱՀԵԼԸ

18. Մատնադրոշմային քարտադարանում հաշվառված ձեռքի հետքերի լուսանկարներով գրանցման քարտերը և դրա թվայնացված տարբերակները հանվում են հաշվառումից՝

1) վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի կարճման կամ հարուցումը մերժելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում.

2) գրանցման քարտերում հաշվառված բոլոր հետքերն անձանց հետ նույնացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

19. Մատնադրոշմային քարտադարանում անձի մատնադրոշմային քարտը և դրա թվայնացված տարբերակը հաշվառվում և պահվում են անժամկետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ձև N 1

Հարցում կատարող երկիրը Запрашиваюшая страна Country of origin		Մատնադրոշմային բանաձև Дактоформула Barcode
Ազգանունը (օրիորդական ազգանունը) Фамилия (девичья фамилия) Surname (Maiden Name)		
Անունը Имя Forename(s)		
Հայրանունը Отчество Patronymic		Նույնացման հաստատում Подверджденне индетификации True identity
Հասցեն Адрес Address		
Սեռը Пол Sex	Ծննդյան թիվը Дата рождения Date of Birth	
Ծննդյան վայրը Место рождения Place of Birth		
Քաղաքացիությունը Гражданство Nationality	Հանցանքը Преступление Offence	

ՄԱՏՆԱԴՐՈՇՄՆԵՐ
ОТПЕЧАТКИ ПАЛЬЦЕВ
ROLLED IMPRESSIONS

1. Աջ բութ 1. Правый большой 1. Right Thumb	2. Աջ ցուցամատ 2. Правый указательный 2. Right Forefinger	3. Աջ միջնամատ 3. Правый средний 3. Right Middlefinger	4. Աջ մատնեմատ 4. Правый безымянный 4. Right Ringfinger	5. Աջ ճկույթ 5. Правый мизинец 5. Right Littlefinger
	16		8	

16		8		4
6. Ձախ բութ 6. Левый большой 6. Left Thumb	7 Ձախ ցուցամատ 7. Левый указательный 7. Left Forefinger	8. Ձախ միջնամատ 8. Левый средний 8. Left Middlefinger	9. Ձախ մատնեմատ 9. Левый безымянный 9. Left Ringfinger	10. Ձախ ճկույթ 10. Левый мизинец 10. Left Littlefinger
4	2	2	1	1

ՄԻԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՄԱՏՆԱԴՐՈՇՄՆԵՐ

ДНОВРЕМЕННЫЕ ОТПЕЧАТКИ ПАЛЬЦЕВ

PLAIN IMPRESSIONS

ՁԱԽ ՁԵՌՔ Չորս մատների միաժամանակյա մատնադրոշմներ
ԱՋ ՁԵՌՔ Չորս մատների միաժամանակյա մատնադրոշմներ
ЛЕВАЯ РУКА Одновременные отпечатки четырех пальцев
ПРАВАЯ РУКА Одновременные отпечатки четырех пальцев
LEFT HAND Four fingers taken simultaneously
RIGHT HAND Four fingers taken simultaneously

Երկու բութ մատներ Два больших пальца Two thumbs	
Ձախ Левый Left	Աջ Правый Right

Դրոշմակնիք Печать Stamp indicating 1st generation copy Պատճեն 1 : 1 Копия 1 : 1 Ratio to original 1 : 1	Մատնադրոշմները վերցնելու ամսաթիվը Дата взятия отпечатков Date Fingerprints Taken Մատնադրոշմների վերցման վայրը Место взятия отпечатков Place Fingerprints Taken

Ծանոթություն
Примечание
Note

Ֆիզիկական արատներ
Физические недостатки
Physical disabilities _____

_____

_____

Մատնադրոշմներ տվողի ստորագրությունը
Подпись дактилоскопируемого
Signature of person fingerprinted _____

Մատնադրոշմները վերցնող անձի պաշտոնը, ազգանունը, ստորագրությունը
Должность, фамилия, подпись лица, изъявшего отпечатки
Position, surname, signature of official taking fingerprints _____

_____

(մատնադրոշմային քարտի ձևաթղթի չափերը՝ 290 x 205 մմ)
(մեկ մատի գլանման դաշտի չափերը՝ 37 x 37 մմ)

Ձև N 2

Ձ Ե Ռ Ք Ի Հ Ե Տ Ք Ե Ր Ի Գ Ր Ա Ն Ց Մ Ա Ն Ք Ա Ր Տ

Ձեռք _____

Բուլ մատ	Ցուցամատ	Միջնամատ	Մատնեմատ	Ճկույթ մատ

Համակարգի անվանումը, որտեղից ներկայացվել են հետքերը_____

Քրեական գործի համարը _____հանցագործության տեսակը _____

Հանցագործության կատարման ժամանակը և հասցեն _____

_____

Ի՞նչ առարկայի վրա են մնացել հետքերը _____

Հետքերի փորձաքննության ներկայացման օրը_____

Փորձագետի եզրակացության համարը _____մուտքագրման օրը _____

Գրանցման քարտը լրացնողի տվյալները_____

Ստուգման օրը _____

Ներկայացված մատնադրոշմային քարտերի քանակը_____

Հետքերը վերցնողի ազգանունը _____